Հավելված N 2
2026 թվականի հունվարի 23-ին կնքված
1032-11002/2026-ԱՀՍՏ20 պայմանագրի

# ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 2

## 1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Միջոցառման անվանում | «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի ծառայություններ» |
| Դրամաշնորհի N | Լոտ 20 Սյունիք – 1 (Կապան) |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն |
| Միջոցառման իրականացման ժամանակահատված | 01.01.2026-31.12.2026թթ. |
| Հաշվետու ժամանակահատված | 01.04.2026.-30.06.2026թթ. |
| Ներկայացման օր | 03.07.2026թ. |
| Հաշվետվության պատասխանատու<br>(անուն, ազգանուն, պաշտոն) | Հասմիկ Մանուկյան<br>Թիմ լիդեր |

Digitally signed by
MKHITARYAN
YERVAND
2508730335
Date: 2026.08.06
10:33:41 AMT

**2. Բովանդակային հաշվետվություն**

**2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

Հաշվետու ժամանակահատվածի համար կատարման ենթակա գործողություններն են.

- սոցիալ- հոգեբանական և խորհրդատվական աջակցության տրամադրում,
- կենցաղային սպասարկում և խնամք,
- բժշկական օգնության կազմակերպում:

**2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:**

- **Սոցիալ- հոգեբանական և խորհրդատվական աջակցության տրամադրման** շրջանակներում սոցիալական աշխատողի կողմից իրականացված տնայցերի միջոցով աջակցություն է տրամադրվել 50 շահառուի Կապան համայնքում: Կապանի սոցիալական աշխատողի կողմից իրականացվել է կարիքի գնահատում և վերագնահատում, որի արդյունքում կատարվել է 11 ուղղորդում:
  Խորհրդատվական աջակցության շրջանակներում շահառուներին շարունակական տեղեկատվություն է տրամադրվել իրենց իրավունքների վերաբերյալ, անհրաժեշտության դեպքում իրականացվել է շահերի պաշտպանություն:
  **Ազատ ժամանցի** շրջանակում կազմակերպվել է թվով 2 միջոցառում՝ Հայոց ցեղասպանության 111-րդ տարելիցի նշում, 1 շահառուի Ծննդյան օրվա նշում, որոնց մասնակցել է 10 շահառու ,
- **Կենցաղային սպասարկման և խնամքի ծառայության տրամադրման** շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում աջակցություն է տրամադրվել 50 շահառուի: Յուրաքանչյուրին իր գնահատված կարիքից և ինքնասպասարկման կարողությունից ելնելով աջակցություն է տրամադրվել բնակարանի մաքրության և անձնական հիգիենայի պահպանման հարցում, գնումների կոմունալ վարձավճարների իրականացման, սննդի կազմակերպման, բարեգործական ճաշարանից կերակրի տուն բերման, անհրաժեշտության դեպքում՝ կերակրման հարցում: Անհրաժեշտության դեպքում իրականացվել է ուղեկցում՝ գնումների, զբոսանքի կամ շահառուի կարիքի բավարարման նպատակով համապատասխանաբար այլ վայր:
- **Բժշկական օգնության տրամադրման** շրջանակներում տունայց է իրականացվել 50 շահառուի՝ ուղղված շահառուների առողջական վիճակի վերահսկմանը, տանը առկա դեղորայքի պիտանելիության ժամկետի ստուգմանը: Հաշվետու ժամանակահատվածում անվճար դեղորայքի իրավունք և տեղաշարժման սահմանափակում ունեցող թվով 11 շահառուի համար պետական պատվերի շրջանակներում տարբեր պոլիկլինիկաներից և բժշկական կենտրոններից ձեռք է բերվել անվճար դեղորայք: 7 շահառու ուղեկցվել է բժշկական տարբեր հաստատություններ՝ հետազոտման, ախտորոշման, բուժման նպատակով:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

Հաշվետու ժամանակահատվածում համացանցում տեղադրվել են հետևյալ նյութերը.

- Միջոցառում նվիրված՝ Հայոց ցեղասպանության 111-րդ տարելիցին (տե՛ս հետևյալ հղմամբ https://surl.li/cytmov)
- Ծննդյան օր (տե՛ս հետևյալ հղմամբ https://surl.li/bqiyje )

**2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջցառման գործողությունների իրականացմանը:**

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի գործողությունների իրականացմանը խոչնդոտող խնդիրներ չեն առաջացել:

**2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

Հաշվետու ժամանակահատվածում նախատեսվում է շարունակել իրականացվող հետևյալ գործողությունները.

- սոցիալ- հոգեբանական և խորհրդատվական աջակցության տրամադրում,
- կենցաղային սպասարկում և խնամք,
- բժշկական օգնության կազմակերպում:

**2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջցառման նպատակին հասնելու համար:**

- Կապանի սոցիալական աշխատողը մասնակցել է ՄՍԾ Կապանի տարածքային կենտրոնում իրականացվող սոցիալական դեպքերի քննարկմանը:
- Կապանի սոցիալական աշխատողը մասնակցել է ACTED կազմակերպության կողմից իրականացվող <<Հումանիտար աջակցության կազմակերպումը մասսայական տեղահանման դեպքում>> երկօրյա դասընթացին:
- Կապանի սոցիալական աշխատողը մասնակցել է ACTED կազմակերպության կողմից իրականացվող <<Հումանիտար աջակցության կազմակերպումը մասսայական տեղահանման դեպքում>> առցանց դասընթացին՝ նվիրված հեռազննման տեխնոլոգիաներ,երկրատեղեկատվական համակարգեր,ազատ հասանելի բազաների օգտագործում,քարտեզագրում թեմաներին:
- Կապանի սոցիալական աշխատողը մասնակցել է ՄՍԾ Կապանի տարածքային կենտրոնում իրականացվող <<Հանդիպում-աջակցող ցանցի ֆորումին:
- Կապանի կենտրոնի պատասխանատու,Կապանի սոցիալական աշխատողը և բուժքույրը մասնակցել են <<Սեռական շահագործման,բռնության,հետապնդման կանխարգելում և վարքագծի կանոնագիրք>> թեմայով դասընթացին:
- Կապանի աշխատակազմը մասնակցել է <<Անձի ֆունկցիոնալության գնահատում. օրենսդրություն,միջազգային մոտեցումներ և գործիքներ>> վերապատրաստման դասընթացին:

Ձևաչափ

ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության տնային պայմաններում խնամքի մատուցված ծառայությունների վերաբերյալ

| հ/հ | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 49/49 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 43 |
| 1.2 | այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան | 7 |
| 1.2.1 | այդ թվում՝ կին | 5 |
| 1.2.2 | 18-40 տարեկան | 1 |
| 1.2.3 | 40-65 տարեկան | 5 |
| 1.3 | 65 տարեկանից բարձր | 47 |
| 2. | Ըստ գնահատված կարիքի՝ դասակարգված խմբերում ընդգրկված շահառուների թվաքանակը (Ա/Բ). *նշել յուրաքանչյուր խմբում ընդգրկվածների թիվը* | Ա – 11<br>Բ - 42 |
| 3. | կենցաղային սպասարկում. | 54 |
| 4. | բժշկական օգնություն և սպասարկում. | 54 |
| 5. | սոցիալ-հոգեբանական օգնություն | 54 |
| 5.1 | այդ թվում՝ մշակութային բնույթի ծառայությունների և միջոցառումների կազմակերպում | 10 |
| 6. | խորհրդատվական օգնություն | 13 |
| 7. | այլ ծառայություն (*նշել*) | - |

Կազմակերպության ղեկավար *Երվանդ Մխիթարյան* «03» 07.2026թ

(ստորագրություն, անուն,ազգանուն)